
**ՊԱՐՍԻՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՎԱՐԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արշակունյաց թագավորության տապալումից հետո Պարսից արքունիքը սկսեց նոր քաղաքականություն վարել Պարսկահայաստանում: Եթե Արշակունիների օրոք ամեն ինչ արվում էր թագավորական իշխանությունը կործանելու համար, ապա նոր քաղաքականության նպատակը Մարզպանական Հայաստանի աստիճանական թուլացումն էր, որն արվում էր տարբեր ուղղություններով՝ և՛ քաղաքական, և՛ ռազմական, և՛ հարկային ու կրոնական:

Արշակունիների անկումից հետո ամենակազմակերպված ու միասնական ուժը, որն ուներ նաև մեծ հարստություն, Հայոց եկեղեցին էր: Այդ էր պատճառը, որ, թագավորական իշխանության վերացմանը զուգահեռ, Պարսից արքունիքը հայ եկեղեցու ամբողջականությունը խախտելու քաղաքականություն որդեգրեց: Առաջին քայլը Սահակ Պարթևին կաթողիկոսական աթոռից զրկելն էր, որին փոխարինեցին Սուրմակը և ազգությամբ ասորիներ Բրքիշոն ու Շամուելը: Վերջիններիս մասին Մովսես Խորենացին հայտնում է. «Եկեալ Շամուելի՝ կալաւ զաթոռ եպիսկոպոսապետութեանն, հետևեալ վարուցն Բրքիշոյի, և առաւել ևս ազահութեանն մասամբ. զի նա զվախճանեալ եպիսկոպոսացն միայն յափշտակեաց զվիճակ, այլ սա և զկենդանեացն, քանզի և փոխանորդ մեռելոցն ոչ տայր թոյլ ձեռնադրել մեծին Սահակայ, և զկենդանեացն դոյզն ինչ գտեալ պատճառս խափանման հարկացն արքունի՝ հալածականս առներ, յինքն կորզելով զամենեցուն տունս»¹:

Հայոց կաթողիկոսական գահին ասորիներ նշանակելով՝ Պարսից արքունիքը ձգտում էր ոչ միայն պառակտել, այլև թուլացնել Հայոց եկեղեցին, քանի որ ասորի կաթողիկոսները, իրենց ընտանիքներով Հայաստան գալով, ցոփ կյանք էին վարում, մտածում էին միայն հարստանալու և ոչ թե Հայոց հովվապետի գործը շարունակելու մասին:

Հայ եկեղեցու նկատմամբ նման քաղաքականությունը Պարսից արքունիքի՝ Մարզպանական Հայաստանում վարվող ներքին քաղաքականության բաղկացուցիչ մասն էր: Պայքարելով եկեղեցու դեմ և ձգտելով այն թուլացնել՝ Պարսից արքունիքը ցանկանում էր հարված հասցնել նաև հայոց լեզվին, մշակույթին, հայկական բարքերին ու կենցաղին, որոնց հովանավորը Հայոց եկեղեցին էր, որի ձեռքում էր գտնվում երկրի նաև դատական իշխանությունը:

Եկեղեցու դեմ Պարսից արքունիքի վարած քաղաքականությունն անմիջականորեն կապվում էր Պարսից երկրի քաղաքական և ռազմական հաջողությունների հետ:

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, Գ-ԿԶ:

Այդպես եղավ նաև Հազկերտ Բ-ի օրոք, որի քաղաքական և ռազմական հաջողությունները նրան թելադրեցին նոր քաղաքականություն վարել երկրի ներսում: Արդյունքը եղավ այն, որ եթե «...աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակորութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տերութեանն Շապիոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ...»², ապա նա իր թագավորության երկրորդ տարվանից սկսած «...գոռոզանայր և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք» (Եղ., Ա), որից հետո «...Ետ հրաման յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զստացուածս, որք էին ի մեջ Պարսկաց աշխարհին» (Եղ., Ա):

Այսպես սկսվեց քրիստոնյաների հալածանքը Պարսից երկրում, որին պետք է հաջորդէր կրոնափոխության պահանջը:

Կրոնափոխության իրականացումը Պարսից արքունիքն սկսեց վերևից, այսինքն՝ այն դարձրեց պետական քաղաքականություն և ցանկանում էր իրականացնել հայ նախարարների միջոցով: Իր քաղաքականության իրականացման համար Հայաստանում սոցիալական հենարան ստեղծելու նպատակով Հազկերտ Բ-ն «...սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց և անարգս ի պատուականաց և զտգետս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր...» (Եղ., Բ):

Այնուհետև Պարսից արքունիքը դիմեց բացահայտ կրոնափոխության պահանջի, որը մերժողներին սպառնում էր ֆիզիկական ոչնչացում: Նման քաղաքականություն վարում էր ոչ միայն Հայքում, այլև իր տիրապետության տակ գտնվող բոլոր քրիստոնյա երկրամասերում: Առաջնությունը պարզապես տրվում էր Հայաստանին, քանզի գտնում էին, որ «...յորժամ դուք (հայերդ - Ռ. Հ.) իբրև զմեզ (պարսիկներին - Ռ. Հ.) ճանաչողք ճշմարիտ մեր օրինացս լինիք՝ Վիրք և Աղուանք ըստ մեր և ձեր կամս չիշխեն ելանել»³:

Հայ եկեղեցու թուլացման հաջորդ քայլը եկեղեցին հարկատու դարձնելն էր, որն իրականացրեց Դենշապուհն իր կատարած աշխարհագրի ժամանակ, քանի որ դրա հետևանքով՝ «Առաջին, ազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն: Երկրորդ, միայնակեաց քրիստոնէայք, որ բնակեալ էին ի վանորայս ընդ նովին աշխարհագրով էարկ» (Եղ., Բ):

Բայց այս քայլը հետևողական կրոնափոխության քաղաքականության միայն սկիզբն էր: Հաջորդը եղավ դատական գործը հայ եկեղեցուց խլելը: Այս մասին Եղիշեն նշում է. «Եւ ևս չարագոյն հինգերորդն քանզի որ հազարապետն է աշխարհին... հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհին, և մեւս ևս մոզպետ՝ դատաւոր աշխարհին, զի եկեղեցւոյն փառսն աղաւաղեցցեն» (Եղ., Բ):

Կրակապաշտությունը հայ իրականության մեջ տարածելու համար Հայաստան ուղարկվեցին մեծ թվով մոզեր, որոնք պետք է ուսուցիչներ դառնային նախարարական ընտանիքներում, քանի որ պարսիկները

² Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1989, Ա:

³ «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», Եր., 1982, ԻԲ:

գտնում էին, որ «դարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոզացն» (Եղ., Բ):

Կրոնափոխությունը Պարսից արքունիքը վարում էր նաև խաղաղ ճանապարհով. նյութապես շահագրգռում էր այն նախարարներին, որոնք կամովին ընդունում էին իրենց հավատը. «Եթե կանօք յանձն առնուք զօրէնսն, պարգևս և պատիւս գտանէք ի նմանէ, և թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ» (Եղ., Գ), հակառակ դեպքում՝ «...հրաման ունինք ի գեօղս և ի քաղաքս շինել ատրուշանս, և զվճարական կրակն ի ներքս դնել և կացուցանել մոզս և մոզպետս օրենսդիր ամենայն աշխարհիդ» (Եղ., Գ):

Պարսից արքունիքն այսպես ձգտում էր կրոնափոխության՝ նպատակ ունենալով իր նվաճած բոլոր երկրներում տիրապետող դարձնել մազդեզաց կրոնը և հնարավորության դեպքում պարսկացնել բոլոր հպատակ ժողովուրդներին:

Հազկերտ Բ-ի սկսած գործը շարունակեցին նաև նրա հաջորդները, բայց արդեն Հազկերտ Բ-ին էլ պարզ դարձավ, որ բռնությամբ հնարավոր չէ կրոնափոխ անել մի ժողովրդի, որի իշխաններն ունեն գինված ուժեր, իսկ ժողովուրդը նվիրված է իր բարքերին ու կրոնին: Ուստի Պարսից արքունիքը դիմեց ավելի մեղմ քաղաքականության և «...զաշխարհն հրամայէր սիրով նուաճել» (Եղ., Զ):

Սա չէր նշանակում, թե Պարսից արքունիքը հրաժարվում է իր քաղաքականությունից, պարզապես նպատակն իրականացվում էր ավելի մեղմ մեթոդներով, այլ ոչ սրով: Եթե Հազկերտ Բ-ի օրոք հայ հոգևորականները սպանվեցին ու կտտանքների ենթարկվեցին (տե՛ս Եղ., Է), ապա նրա հաջորդները խիստ հսկողության տակ էին պահում Հայոց կաթողիկոսին ու նա գործունեությունը: Ղազար Փարպեցին վկայում է, որ ամբաստանված Գյուտ կաթողիկոսին Պարսից արքա Պերոզն անմիջապես կանչում է արքունիք և բացատրություն պահանջում (տե՛ս Փարպ., ԿԴ):

Պարսից արքայից արքա Պերոզի օրոք այնքան լարված մթնոլորտ էր տիրում հայ իրականության մեջ, որ հալածանքներից խուսափելու համար Պարսից արքունիք է մեկնում և հավատափոխ լինելով Հայաստան է վերադառնում նաև Վահան Սամիկոնյանը (տե՛ս Փարպ., ԿԵ): Պերոզի թագավորության ընթացքում կրոնական հալածանքները ծայրահեղ ընթացք են ստանում, և այնքան է լարվում ներքին իրավիճակը, որ հայրենասեր ուժերին պայքարի է հանում պարսից տիրապետության դեմ:

Պերոզի օրոք իրականացված հակաքրիստոնեական պայքարի մասին հիշատակում է նաև Սեբեոսը, ըստ որի՝ «Եւ եղև յամս Պերոզի արքայի Պարսից բարձունն ամենայն իշխանութեանցն և կարգաց արինաց քրիստոնէութեան»⁴:

Հակաքրիստոնեական հալածանքների մասին է վկայում նաև Վահան Սամիկոնյանի՝ Նիխորին ուղարկած երեք պահանջներից առաջինը. «...եթ զհայրենի և զքնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զհայ այր զոք մի՝ մոզ ոչ առնէք, և ումեք յաղագս մոզութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք... և քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներ-

⁴ «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 2005, Ը:

կիւղ տայք պաշտել...» (Փարպ., ՁԹ), որը վկայում է, որ հալածվել են հայրենի և բնիկ օրենքները, մարդկանց կրակապաշտ են դարձրել, մոգությունն ընդունելու համար զահ ու պատիվ են շնորհել, Հայոց երկրում կրակարաններ են ստեղծել: Այսինքն՝ կրոնափոխության քաղաքականությունը շարունակական բնույթ է կրել և հետևողականորեն կիրառվել:

Հայ եկեղեցու դեմ ծավալած պայքարը ժամանակավորապես դադարել է Վահան և Վարդ Սամիկոնյանների մարզպանության օրոք: Դրա պատճառը պարսից իշխանության թուլացումն էր, որի հետևանքով նա մեղմ քաղաքականություն էր վարում երկրում՝ խռովությունների առիթ չտալու համար:

Կրոնական քաղաքականությունը երկրի ներսում վարվում էր հաշվի առնելով նաև հայ-բյուզանդական հարաբերությունները: Պարսից արքունիքը վախենում էր այդ մերձեցումից, քանի որ երկուսն էլ քրիստոնյա էին: Պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ Պարսից արքունիքը մեղմացնում էր կրոնական ճնշումը, որպեսզի հայերը չանցնեին բյուզանդացիների կողմը, իսկ պատերազմի հաջող ավարտի դեպքում շարունակում էր կրոնական ճնշումն ու կրակատների կառուցումը: Հայ-բյուզանդական մերձեցումը խափանելու համար Պարսից արքունիքն ամեն ինչ անում էր հայ-բյուզանդական դավանական պառակտումը խորացնելու նպատակով, որը հատկապես սրվեց 6-րդ դարում: Այս առումով կարևոր էր 554 թ. Դվինի ժողովը, որը հակաքաղկեդոնական ուղղվածություն ուներ:

Պարսից արքունիքը խրախուսում էր հայ եկեղեցու հակաքաղկեդոնական ուղղվածությունը, բայց միաժամանակ, հայ եկեղեցուն միայնակ տեսնելով, արքունիքն ինքն էր ուժեղացնում կրոնական ճնշումը, ատրուշանների կառուցումը:

Այսպես եղավ հատկապես Պարսից արքայից արքա Խոսրով Ա-ի օրոք, որն անհանդուրժողական քաղաքականություն էր վարում՝ նաև կրոնական հարցերում. մոգերի դրդմամբ հրամայում է զրադաշտականություն տարածել ամբողջ երկրում, կրոնափոխ անել իր բոլոր հպատակներին՝ առաջին հերթին հայերին: Նա ավերում է բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր, հրամայում է ատրուշաններ կառուցել ամբողջ Պարսկաստանում և «...ամենից առաջ Դվինում»⁵:

Նման անհանդուրժողական վերաբերմունքը քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ չէր կարող դժգոհության ալիք չբարձրացնել: Պարսիկ մարզպան Սուրենի օրոք հայերը համաձայնվում են հնազանդվել և հպատակվել Պարսից արքունիքին, եթե կրոնափոխության պահանջն իր բոլոր դրսևորումներով չլինի, բայց մարզպանը շարունակում է ատրուշանների կառուցումը, որն էլ հանգեցնում է ապստամբության:

Հայ եկեղեցու նկատմամբ Պարսից արքունիքի քաղաքականությունը փոխվեց Խոսրով Բ Փարվեզի (590-628) թագավորության տարիներին: Նա սկսեց հովանավորել հայ եկեղեցուն, Սմբատ Բագրատունի Խոսրով Շումին թույլ տվեց «...չհնել զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ էր ի Դուին քաղաքի» (Սեբ., ԻԷ): Նրա օրոք է իրականացվել նաև «Շինումն տաճարին Հռիփսիմեայ» (Սեբ., ԼԷ) Վաղարշապատում՝ Հռիփսիմեի նախկին մատու-

⁵ Пигулевская Н. В. Сирийские источники по истории народов СССР. М.-Л., 1941, с. 109-111.

ռի տեղում, Կոմիտաս կաթողիկոսի կողմից: Խոսքով Բ-ի նման քաղաքականությունն իր հիմնավորումն ուներ: Բանն այն է, որ Հայոց եկեղեցին 606 թ. և 607 թ. Դվինի եկեղեցական ժողովներում հայտարարեց և պաշտպանեց հայ եկեղեցու անկախությունը բյուզանդական եկեղեցուց, մի բան, որը բխում էր պարսից քաղաքականության շահերից: Այժմ եկեղեցին հայ բյուզանդական մերձեցման վտանգից պաշտպանված էր: Մյուս կողմից՝ այս ժամանակ վրաց եկեղեցին անջատվեց միաբնակ հայ եկեղեցուց և ընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, որը նշանակում էր մերձեցում բյուզանդական եկեղեցուն:

Այս ժամանակ Պարսից պետության սահմաններն ընդարձակվել էին, և նրա կազմի մեջ էին մտնում բազմաթիվ այլադավան ժողովուրդներ, որոնց ղեկավարելու համար արքունիքը ստիպված էր մեղմ կրոնական քաղաքականություն վարել: Այդ պատճառով է, որ Խոսքով Բ-ն Տիգրանում եկեղեցական ժողով հրավիրեց՝ դավանաբանական վեճերը կարգավորելու նպատակով: Այս ժողովը ևս քաղաքական նպատակներ էր հետապնդում: Մերժելով Քաղկեդոնի ժողովի որոշումները՝ Խոսքով Բ-ն որոշում է ընդունում. «...եթե ամենայն քրիստոնեայք, որ ընդ ինով իշխանութեամբ են՝ հաւատ զՀայոց կալցին» (Սեբ., ԺԳ):

Նման որոշումը բխում էր Պարսից պետության շահերից և հակադրվում էր Բյուզանդիային: Պարսից երկրում այս ժամանակ քրիստոնեությունը լայն տարածում էր գտել նաև բուն պարսիկների շրջանում, և այդ է պատճառը, որ դավանափոխությունը կանխելու համար Խոսքով Բ-ն «Եւ հրաման ետ, ասէ. «Մի՛ ոք յանարիմաց իշխեսցէ դառնալ ի քրիստոնէութիւն, և մի՛ ոք ի քրիստոնէից դարձցի յանարիմութիւն, այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յաւրէնս պինդ կացցէ» (Սեբ., ԺԳ): Այսպիսով, Խոսքով Բ-ի օրոք հավասարություն է դրվում քրիստոնեության և մյուս կրոնների միջև:

Խոսքով Բ-ից հետո Պարսից երկրում Սասանյանների թագավորությունը սկսեց հոգևարք ապրել: Այս պայմաններում պարսից արքաներն արդեն ի վիճակի չէին հակաքրիստոնեական քաղաքականություն վարելու մինչև իրենց վերջնական կործանումը:

Այսպիսով՝ մարգպանության շրջանում հայերի նկատմամբ Պարսից արքունիքի վարած քաղաքականությունը կարելի է բաժանել մի քանի շրջանի:

Առաջին՝ մարգպանության հաստատումից մինչև Հազկերտ Բ-ի (439-457) թագավորության երկրորդ տարին, երբ քրիստոնեության նկատմամբ վարվում էր ներողամիտ քաղաքականություն: Սա բացատրվում է նրանով, որ Մարգպանական Հայաստանը բավականին ուժեղ էր, և այն թուլացնելու համար Պարսից արքունիքն այլ միջոցների էր դիմում, և, չնայած դրան, Հայաստանը դեռ այնքան թույլ չէր, որ ձուլման քաղաքականությունն օրվա խնդիր լիներ:

Երկրորդ շրջանը սկսվում է Հազկերտ Բ-ի թագավորության երկրորդ տարվանից և հասնում մինչև Պարսից արքայից արքա Վաղարշի (484-491) թագավորության սկիզբը: Այս շրջանում կրոնական հալածանքները հասնում են իրենց գագաթնակետին, կրոնափոխությունը առաջին պլան է մղվում, կառուցվում են ատրուշաններ, նյութապես և բարոյապես խրախուսվում է կրոնափոխությունը: Այնքան անտանելի է դառնում իրավիճակ-

կը, որ հայրենասեր ուժերը Վարդան և Վահան Մամիկոնյանների գլխավորությամբ ապստամբությունների են դիմում:

Երրորդ շրջանը կարճատև էր և ընդգրկում էր Վահան և Վարդ Մամիկոնյանների մարզպանության ժամանակահատվածը, երբ թուլացած Պարսից արքունիքը հանդուրժողական քաղաքականություն էր վարում հայերի նկատմամբ՝ աշխատելով վերահսկել իր ներքին և արտաքին դրությունը:

Չորրորդ շրջանը ժամանակագրական առումով հասնում է մինչև Պարսից արքայից արքա Խոսրով Բ-ի (590-628) թագավորության սկիզբը: Այս ընթացքում կրոնական պայքարը շարունակվում է երկուստեք: Մի կողմից Պարսից արքունիքը շարունակում է կրոնափոխության խրախուսումն ու ատրուշանների կառուցումը, մյուս կողմից՝ հայերը իրենց ինքնությունը պահելու համար դիմում են պայքարի ծայրահեղ միջոցին՝ զինված ապստամբությանը: Այս քայլին հայերը դիմեցին Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ 572 թվականին:

Իր բնույթով առանձնանում է հինգերորդ շրջանը, որը սկսվում է Խոսրով Բ-ի թագավորության սկզբից և տևում մինչև Սասանյանների արքայատոհմի կործանումը: Այս ժամանակահատվածում Պարսից արքունիքը, ելնելով իր ներքին և արտաքին դրությունից, քրիստոնյաների նկատմամբ վարում է ոչ միայն հանդուրժողական քաղաքականություն, այլև նույնիսկ հավասարության նշան է դնում քրիստոնեության և մյուս կրոնների միջև:

Բոլոր դեպքերում էլ Պարսից արքունիքի վարած կրոնական քաղաքականությունը բխում էր իր երկրի և իր պետության շահերից:

РУЗАННА АРУТЮНЯН – *Религиозная политика персидского двора в Марзпанской Армении.* – Религиозная политика персидского двора являлась частью его внутренней политики, целью которой было распространение персидской религии по всей Сасанидской империи. Чтобы достичь своей цели, персидский двор сократил права Армянской церкви, построил капища, настаивал, чтобы армянский народ принял огнепоклонство.

Религиозная политика персидского двора в Марзпанской Армении делится на пять периодов, отличных друг от друга по своему характеру, но неизменно продиктованных интересами своей страны и государства.

RUZANNA HARUTYUNYAN – *The Religious Policy of Persian Royal Court in Marzpanate Armenia.* – The religious policy of Persian Royal Court was the part of its domestic policy. The goal of this policy was spreading Persian religion in Marzpanate Armenia. To achieve this goal Persian Royal Court restricted the rights of the Armenian Church, built pagan temples and forced the Armenians to adopt their religion.

The religious policy of Persian Royal Court in Marzpanate Armenia is divided into 5 districts, which differ from each other by their nature.

In all cases the religious policy of Persian Royal Court was based on the interests of its own country and state.